ՀԱՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

640-ական թվականներին իսլամի ահագնածավալ հորձանքը սպառնում էր Արևելքի քրիստոնյաներին, առաջին հերթին, իհարկե, հայերին և Բյուզանդիայի սահմաններում ապրող մյուս ժողովուրդներին: Այդ սպառնալիքը վտանգավոր ձևեր ընդունեց հատկապես Սասանյան Պարսկաստանի անկումից հետո, երբ արաբներն իրենց բոլոր ուժերը նետեցին Հայաստանի ու Բյուզանդիայի դեմ: Հերակլիոսի (610-641) կայսրության վերջին տարիներին արդեն արաբներն սկսեցին իրենց հարձակումներով սասանել Բյուզանդիան: Այդ սպառնալիքին հաջողությամբ դիմագրավելու հույսով կայսրը լայնախոհ քաղաքականությամբ ջանում էր իր կողմը գրավել նաև պարսկական բաժնի հայ նախարարներին: Տվյալ իրավիճակում հող ստեղծվեց երկու հավատակից երկրների ռազմաքաղաքական դաշինքի համար: Կայսրը Բյուզանդիայի հայկական հատվածին չնորհեց ինքնավարություն, այնտեղ կառավարիչ նշանակելով Մժեժ Գնունուն: Վերջինս պետք է ջանար իր իշխանությունը տարածել նաև Հայաստանի պարսկական մասում, որտեղ դեռևս Կավատ II արքայի կողմից մարզպան էր կարգվել Վարազտիրոց Բագրատունին՝ Սմբատի (Խոսրով Շումի) որդին[1]:

Սասանյան Պարսկաստանի փլուզումից հետո հայ նախարարները ջանում էին Հայաստանի շահերից բխող քաղաքականություն վարել: Ատրպատականի անմատույց շրջաններում դեռևս իր անկախությունը պահպանած Մարաց իշխանը փորձեց հնազանդեցնել Վարազտիրոցին: Մյուս կողմից Մժեժն էր ջանում իր իշխանությանը ենթարկել Վարազտիրոցին, որին մեկուսացնելու համար նա չխորշեց Մարաց իշխանի օժանդակությունից: Սակայն դա նրանց չհաջողվեց՝ չնորհիվ Վարազտիրոցի ճկուն գործելակերպի: Վերջինս ուղղակի կապերի մեջ մտավ Հերակլիոսի հետ՝ ճանաչելով նրա գերիշխանությունը: Սակայն կայսրն իր դեմ նյութված դավադրությանը մասնակցելու մեղադրանքով Վարազտիրոցին աքսորեց Հյուսիսային Աֆրիկա[2], որտեղ նա հավանաբար պետք էր կայսրության թշնամիների դեմ մարտնչելու համար: Դավադրության բացահայտումը և նրա մասնակիցներին պատժելը տեղի է ունեցել 638 թ. հուլիսից հետո[3], հետևաբար, Վարազտիրոցը պետք է աքսորված լիներ այդ թվականին:

---

1 *Պատմութիւն Սեբէոսի, աշխ. Գ. Աբգարյանի. Երևան, 1979, էջ 128-129:*

2 *Նույն տեղում, էջ 133:*

3 И. О р б е л и. Избранные труды. Ереван, 1963, с. 399.

Նույն տարում Հերակլիոսը Դավիթ Սահառունուն նշանակեց իշխանաց իշխան «ի վերայ ամենայն աշխարհացն», գրում է Սեբեոսը, նշելով նաև, որ նա իշխեց «ամս Գ»[4]: Հետևաբար, Դավիթ Սահառունին Հայաստանի կառավարչի պաշտոնը վարել է 638-641 թթ.: Մրենի եկեղեցու որմին արձանագրված է, որ նրա կառուցումն ավարտվել է «ամուրն քսան և իններորդի Հերակլի ... յիշխանութեան Դաւթի ամենադով պատրկի կուրապաղատի և սպարապետի Հայոց և Ասորւոց...»[5]: Արձանագրությունից երևում է, որ այն փորագրվել է Հերակլիոս կայսեր գահակալման 29-րդ տարում, իմա՝ 639 թ.: Դավիթ Սահառունին ջանում էր կենսագործել կայսեր քաղաքա՛ն նպատակները Հայաստանում: Հերակլիոսը, հավաստում է Սեբեոսը, «հ.ստատէ զնա (Դավիթ Սահառունուն – Վ. Վ.) ի ծառայութիւն իւր», սա՛յն հայ նախարարները չհանդուրժեցին կայսեր դրածոյին և վերջինս «անարգեալ ի գաւրացն հալածեցաւ»[6]:

Արաբական արշավանքների վտանգը հրամայաբար պահանջում էր իսլամի դեմ համախմբել Բյուզանդիայի և Հայաստանի ուժերը: Քաղաքական այս հետնախորքի վրա առավել կարևորվեց հայ նախարարների հանդեպ Հերակլիոս կայսեր սիրաշահող քաղաքականությունը, որը շարունակվեց նաև նրա հաջորդի օրոք: Հերակլիոսի գահակալման վերջին տարում արաբները թափանցեցին նաև Հայաստան: Համաձայն Սեբեոսի վկայության, արաբներն առաջին անգամ Հայաստան ներխուժեցին Եզր կաթողիկոսի մահվան և Ներսես Գ-ի աթոռակալության առաջին տարում՝, որն ընկնում է 641 թ.[8]: «Պատմութիւն սրբոյն Ներսիսի և գիւտ նշխարաց» գրվածքում նշվում է, որ դեպի Հայաստան արաբական առաջին արշավանքը տեղի է ունեցել Հայոց 88 թվականին[9], որը համապատասխանում է 640 թվականին[10]:

Արաբ մատենագիրների երկերում պարունակված տեղեկությունները հիմնականում համընկնում են հայկական սկզբնաղբյուրների ընձեռած տվյալներին: Ըստ Բելաղուրիի, արաբներն առաջին անգամ Հայաստան են արշավել Հիջրի 19-ին և 20-ի Մուհառռամ ամսին (իմա՝ 640 թվականից մինչև 641 թ. հունվարն ընդգրկող ժամանակամիջոցը)[11]: Թաբարին և Իբն ալ-Ասիրը Հայաստան կատարած առաջին ներխուժման թվական են համարում 640-ը[12]:

Սեբեոսի հաղորդման համաձայն, Հայաստան կատարած առաջին արշավանքի ժամանակ արաբները Միջագետքից Զորասլահակ լեռնանցքով խուժեցին Տարոն, ապա գրավեցին նաև Բզնունիքն ու Աղիովիտը, որից

---

4 Սեբեոս, էջ 133-134:

5 И. Орбели. Указ. соч., с. 401.

6 Սեբեոս, էջ 133-134:

7 Նույն տեղում, էջ 138-139:

8 Մ. Օրմանյան. Հայոց եկեղեցին. Երևան, 1993, էջ 66, 252:

9 Սոփերք հայկականք. հ. Է, Վենետիկ, 1843, էջ 43-44:

10 Հ. Մանանդյան. Երկեր. հ. Բ, Երևան, 1978, էջ 509-510:

11 Baladhuri. The origins of the Islamic State, I, New York, 1916, p. 275.

12 Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին. թարգմ. Բ. Խալաթեանց. Վիեննա, 1919, էջ 80: Արաբական աղբյուրներ Բ, Իբն ալ-Ասիր, թարգմ. առաջաբան և ծան. Ա. Տեր-Ղևոնդյանի. Երևան, 1981, էջ 45:

հետո Բերկրիի ձորով մտան Կոգովիտ: Շարունակելով հարձակումը, նրանք հասան Դվին մայրաքաղաք և պաշարեցին այն[13]:

Բելազուրին նշում է, որ արաբական Իյադ զորապետը Միջագետքից ներխուժեց Աղձնիք և գրավեց նրա Արզն (Աղձն) գավառի համանուն կենտրոնը[14]: Իբն ալ-Ասիրը Զորրորդ Հայքի գրավումը դնում է Պաղեստինի և Կեսարիայի նվաճումից առաջ: Պաղեստինը արաբները գրավել են 638 թ., Կեսարիան՝ 640 թ.[15]: Ըստ այդմ արաբներն առաջին հերթին թափանցել են Զորրորդ Հայք, նկատի առնելով նրա ռազմավարական կարևոր նշանակությունը Բյուզանդիայի դեմ մղվող պատերազմներում: Արզնը գրավելուց հետո, համաձայն Բելազուրիի հաղորդման, Իյադը «հասավ Բիթլիս, ապա ժամանեց Խլաթ, որի պատրիկը նրա հետ պայմանագիր կնքեց: Ապա նա հասավ Ալ-այն ալ-Համիդա («Աղի ջրեր»)[16], որ Հայաստանում է, բայց չսպառնաց նրան, իսկ երբ ետ դարձավ, Բիթլիսի սահիբի վրա դրեց Խլաթի խարաջի գանձման պատասխանատվությունը»[17]:

Բիթլիսից մինչև Խլաթ Իյադը պետք է անցներ Բզնունիք և Աղիովիտ գավառներով, ինչը վկայված է նաև Սեբեոսի մոտ[18]: Ըստ Բելազուրիի, Իյադ զորապետի՝ Հայաստան կատարած արշավանքի վերջնագիծը Բիթլիս–Խլաթ–Աղի ջրեր ռազմուղին էր: Փաստորեն դրանով ավարտվեց Իյադի արշավանքը, որից հետո նա վախճանվեց: Բելազուրին Իյադի մահը դնում է Հիջրի 20 թ., իմա՝ 640 թ. դեկտեմբերին կամ 641-ի սկզբին: Սակայն ժամանակամերձ, հետևաբար, ավելի արժանահավատ Սեբեոսն ու Ղևոնդը հավաստում են, որ արաբական առաջին արշավանքների ժամանակ ասպատակվել, ավարառության ու կոտորածի են մատնվել նաև Այրարատն ու այլ երկրամասեր: Հարկավ, արաբների նպատակն էր բովանդակ Հայաստանի ու կովկասյան մյուս երկրների նվաճումը, ուստի անբնական կլիներ, որ նրանք կես ճանապարհին ետ քաշեին իրենց ուժերը: Առանց Հայաստանի սիրտը թափանցելու, նրա քաղաքական ու կրոնական կենտրոն Դվինը գրավելու, արաբները չէին կարող նվաճված համարել այդ երկիրը: Ավելին. Հայաստանի նվաճումը դյուրացնելու էր նրանց հետագա գործողությունները կովկասյան երկրաշրջաններում: Արաբները նույնիսկ փորձեցին օգտագործել որոշ հայ նախարարների իրենց արշավանքների ժամանակ: Մոկաց իշխան Վաղդիկը օժանդակեց արաբ զորայիններին՝ Այ-

---

13 Սեբեոս, էջ 138:

14 Baladhuri, I, p. 275.

15 Е. Беляев. Арабы, ислам и Арабский халифат в раннее средневековье. М., 1966, с. 138.

16 Նույնացվում է Վարշակի ջերմուկի հետ (տե՛ս Է. Լ. Դանիելյան. Հայաստանի քաղաքական պատմությունը և հայ առաքելական եկեղեցին (VI-VII դարեր). Երևան, 2000, էջ 157): Այդ դեպքում հարկ է ընդունել, որ Իյադի զորքը հասել է Այրարատ, քանի որ Վարշակի ջերմուկը Այրարատի Ծաղկոտն գավառում էր: Ավելի հավանական է այդ վայրը փնտրել Աղիովիտ գավառում, որը տարածվում էր Վանա լճի հյուսիսային ափերին: Պետք է կարծել, որ Իյադի զորքը չի հեռացել Վանա լճի ափամերձ տարածքներից և Աղիովիտով շարժվել է դեպի հյուսիս-արևելք, գուցե կամենալով գրավել նաև Արճեշը: Հասնելով գավառի ծծմբաղբյուրներին, այն ետ է վերադարձել (ծծմբային այս ջերմուկները հիշվում են նաև նոր ժամանակներում: Տե՛ս. Ա – Դ օ. Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները. Երևան, 1912, էջ 37):

17 Baladhuri, I, p. 275.

18 Սեբեոս, էջ 138:

բարատ թափանցելու[19] *(այս իշխանին հիշում է նաև արաբ հեղինակ Ալ-Վակիդին (748-823)՝ Վարաաբեկ անունով, որն, անշուշտ, Վարդիկի արաբական ձևն է): Վարտաբեկը գործակցում էր Հայաստան արշաված արաբական զորականների հետ*[20]*: Հայտնի է, որ արաբներին զորակցում էր նաև Անձևացյաց իշխան Սահուռը*[21]*:*

Վարդիկ Մոկացու օգնությամբ անցնելով Մեծամորը, արաբական զորքը ասպատակելով «զամենայն երկիրն, և ժողովեալ զաւար և զգերութիւն բազում յոյժ», բանակեց Խոսրովակերտ անտառի եզրին: Այնուհետև հնգօրյա գաղարից հետո արաբները, ըստ Սեբեոսի հաղորդման, «գիմեցին ի վերայ քաղաքին. մատնեցաւ քաղաքն ի ձեռն նոցա... եւ դիմեալ ի ներքս զաւրք թշնամեացն՝ սատակեցին սրով զբազմութիւն քաղաքին և առեալ զաւար և զկապուտ քաղաքին՝ ելին և բանակեցան ի նմին բանակատեղն, որ աւր ի էր տրէ ամսոյն, յաւուր ուրբաթի»[22]*: Պատմագրի վկայության համաձայն, արաբները Դվինը գրավեցին Հերակլիոս կայսեր մահվանից հետո, Եզը կաթողիկոսի դահակալության վերջին տարում, երբ «յաջորդեցաւ ի նմին ամի յաթոռ կաթողիկոսութեան փոխանակ Եզրի կաթողիկոսի»*[23]*: Ինչպես տեսնում ենք, Դվինի դրավումը դրվում է Եզրի աթոռակալության վերջին և Ներսես Շինողի կաթողիկոսության առաջին տարում, այսինքն 641 թ.: Քազաքի դրավումը մեկ տարով ավելի ուշ է նշված Ղևոնդի, Անանուն ժամանակագրի և Ասողիկի մոտ: Դվինի դրավման տարբեր թվականներ են նշված ուրիշ հեղինակների երկերում*[24]*: Ասորի պատմագիր Դիոնիսիոս Տելմահրեցու վկայությունները համընկնում են Սեբեոսի հաղորդած տեղեկության հետ: Նա նույնպես Դվինի դրավումը դնում է 641 թվականին, նշելով նաև սրի քաշված դվինցիների թիվը (12 հազար)*[25]*: Այդպիսի վերաբերմունքը, անշուշտ, հետևանք էր դվինցիների դիմադրության: Արաբները նման դեպքերում դաժան վերաբերմունք էին ցուցաբերում պարտվածների հանդեպ*[26]*:*

Բելաղուրին Իյադին ենթակա զորապետ է հիշում Հաբիբ իբն Մասլամային, որը նրա հրամանով դեռևս 640 թ. արշավեց Սամոսատ և այլուր[27]*: Այս արշավանքի ժամանակ այդ զորապետը փաստորեն չի մասնակ-*

---

19 *Նույն տեղում:*

20 N. A d o n t z. Les fonds historiques de l'épopée Byzantine Digenis Akritas ("Etudes arméno byzantines", Lisbonne, 1965, p. 30).

21 *Յ ո վ հ ա ն Մ ա մ ի կ ո ն ե ա ն. Պատմութիւն Տարօնոյ, աշխ. Ա. Աբրահամյանի. Երևան, 1941, էջ 285-286:*

22 *Է. Դանիելյանը, հենվելով Բելազուրիի և Իբն ալ-Ասիրի տեղեկությունների վրա, կարծում է, որ «Հայաստանում կատարած առաջին, երկրորդ և երրորդ արշավանքների ժամանակ արաբները Դվին չէին հասել» (տես Է. Դ ա ն ի ե լ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 157): Սակայն Սեբեոսի վկայությունը չպետք է աչքաթող անել, քանի որ ժամանակակից է կատարված անցքերին և ավելի լավ դիտե Հայաստանը, քան ժամանակով մի քանի դար հետո ապրած արար հեղինակները: Բելազուրին և Իբն ալ-Ասիրը նկատի ունեն սոսկ Իյադի զորաբաժինը, մինչդեռ Հայաստան թափանցած արաբական զորախումբն ուներ նաև այլ զորամասեր, որոնք, ինչպես տեսանք, ասպատակեցին Հայաստանի նաև մյուս շրջանները:*

23 *Տե՛ս Ս ե բ ե ո ս, էջ 139:*

24 *Մանրամասն տե՛ս Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Երկեր, հ. Բ, էջ 513-519:*

25 Chronique de Denis de Tell Mahre, publ. et trad. par J. Chabot. Paris, 1895, p. 6.

26 A b o u J o u s u o f J a k o u b. Le Livre de l'impot foncier ("Kitab el-Kharadj"), trad. et annote par E. Fagnan. Pari s, 1921, p. 89; B a l a d h u r i, I, p. 104.

27 B a l a d h u r i, I, p. 272–273.

ցել Իյադի Հայաստան կատարած արշավանքին: Սակայն ինչպես հավաստում է Բելազուրին, երբ Օսմանը դարձավ խալիֆա, «Ասորիքի, Միջագետքի և նրանց սահմանակից քաղաքների իր կուսակալ Մուավիային հրամայեց, որպեսզի Հաբիբ իբն-Մասլամային ուղարկի Հայաստան: Հաբիբը մոտ ութ հազարանոց զորքով Ասորիքից ու Միջագետքից շարժվեց դեպի Հայաստան և հասնելով Կալիկալա (Կարին), բանակեց այնտեղ»[28]: Յակուբին հիշում է, որ «Հաբիբ իբն-Մասլաման նվաճեց Հայաստանի մի մասը»[29]: Օսման խալիֆան գահակալել է 644 թվականից, ուստի Հաբիբի արշավանքը Հայաստան այդ թվականից շուտ չէր կարող տեղի ունենալ: Տարբեր էին նաև Իյադի և Հաբիբի զորքերի արշավուղիները: Իյադի ռազմուղին, ինչպես տեսանք, ձգվում էր Մծբին–Արզն–Բաղեշ–Խլաթ ուղղությամբ, մինչդեռ Հաբիբի զորքը շարժվեց Միջագետք–Կարին արշավագծով:

Հայ և օտար մատենագիրների վկայությունները թույլ են տալիս ենթադրելու, որ արաբները Դվինը գրավել են թե՛ 641 թ. և թե՛ 650 թ. սկզբներին[30]: Դա միանգամայն հնարավոր էր, քանի որ 641 թ. արաբները չհաստատվեցին Հայաստանում, ուստի կայազոր չթողեցին Դվինում: Այդ պատճառով նրանք հաջորդ արշավանքի ժամանակ վերստին պետք է գրավեին այդ քաղաքը: Արաբներն իրենց առաջին արշավանքների ժամանակ տիրացան Հայաստանի պարսկական մասին, որտեղ Հայոց զորապետն էր Թեոդորոս Ռշտունին: Վերջինս ուներ պարսկական կողմնորոշում և դիմադիր դիրքավորում արաբ նվաճողների հանդեպ: Նա ամրացավ Աղթամար կղզում, որտեղ շինարարություն կատարեց (հավանաբար պաշտպանական բնույթի) և կարողացավ ետ վանել տարբեր հրոսախմբերի հարձակումները[31]: Նման իրավիճակում ո՛չ Թեոդորոս Ռշտունին և ո՛չ էլ նախարարներից որևէ մեկն ի զորու չէր միաբանել Հայաստանի իշխաններին և երկրում հաստատել միասնական իշխանապետություն: Ճիշտ է, տվյալ պահին հարևան զորեղ պետությունները չէին տնօրինում Հայաստանի քաղաքական ճակատագիրը, սակայն հայ նախարարները գերադասեցին ամրապնդել իրենց ենթակա գավառներում ունեցած իշխանությունը և չճանաչեցին Թեոդորոս Ռշտունու գերակայությունը: Սեբեոսը գրում է, որ Հերակլիոս կայսեր վախճանվելուց հետո «ոչ ոք ընտրեցաւ զաւրավար յաշխարհին Հայոց, քանզի անմիաբան լեալ իշխանացն մեկնեցան ի միմեանց»[32]: Այդուհանդերձ Թեոդորոս Ռշտունին փորձեց դիմադրություն ցույց տալ արաբներին, որոնց ներխուժումը կանխելու համար, ըստ որոշ ուսումնասիրողների, նա մեկնեց Նախճավան, սպասելով թշնամուն այդ

28 Նույն տեղում, էջ 315–316:

29 Из соч. Якуби "История", текст и перевод П. Жузе. Баку, 1927, с. 5.

30 Հմմտ. Թ ե ո փ ա ն ե ս Խ ո ս տ ո վ ա ն ո ղ. Ժամանակագրություն. թարգմ., առաջաբան և ծանոթագրություններ Հր. Բարթիկյանի. Երևան, 1983, էջ 56, 252, ծան. 336: Դվինը երկրորդ անգամ արաբների կողմից գրավվելը Հ. Համբարյանը գնում է 654թ. (տե՛ս Հ. Հ ա մ բ ա ր յ ա ն. Հայք արաբացվոց իշխանության տակ. Ժամանակագրական խնդիրներ Սեբեոսեն.– «Հուշարձան», Վիեննա, 1911, էջ 246):

31 Ս ե բ ե ո ս, էջ 134:

32 Նույն տեղում, էջ 138:

կողմերից[33]: Այս մասին Սեբեոսը գրում է. «Արք երեք յիշխանացն, որք երթային ժողովել զզաւրն Ճապաղական, Թէոդորոս Վահևունի, և Խաչեան Առաւեղեան, և Շապուհ Ամատունի: Որք գնացեալ փախստական ի Դուին... Հայց Թեոդորոսն դնացեալ ի Նախճաւան քաղաք»[34]: Այստեղ պատմադիրը նկատի ունի ոչ թե Թեոդորոս Ռշտունուն, այլ Թեոդորոս Վահևունուն: Նկատենք, որ Սեբեոսը առաջինին միշտ հիշում է որևէ վերադիրով. «Թեոդորոս Ռշտունեաց տէր» (11 անդամ), «Ռշտունեաց տեառն» (4 անդամ) կամ պարզապես «Թէոդորոս Ռշտունի» (3 անդամ), «Զաւրավարն Հայոց Թեոդորոս» (2 անդամ) ձևերով, բայց երբեք չի հիշատակում լոկ «Թէոդորոս» անունով: Մինչդեռ մեջբերված վկայության մեջ «Թեոդորոս» անունը առանց վերադիրի է: Ըստ երևույթին այդաեղ պատմադիրն ի նկատի ունի Թեոդորոս Վահևունուն, որին, ինչպես տեսանք նույն մեջբերման մեջ, նա արդեն հիշել էր տոհմանունով, ուստի երկրորդ անգամ հիշելիս հարկ չի համարել այն կրկնել: Ըստ երևույթին Թեոդորոս Վահևունին Դվինից հեռացել է Նախճավան՝ Սյունիք անցնելու և այնտեղ իր տիրույթները պաշտպանելու նպատակով: Հետադայում ևս, ինչպես վկայում է Սեբեոսը, Թեոդորոս Վահևունին Թեոդորոս Ռշտունու հրամանով մեկնում է Սյունիք (Վայոց ձոր), գրավում Արփայք (Արփայս) բերդը, որտեղ գտնվում էին «ամենայն գանձքն աշխարհին, եկեղեցւոյ և իշխանաց և վաճառականաց»[35]:

Արաբական այս արշավանքների ժամանակ հայ նախարարները չկարողացան միավորել իրենց ուժերը և դիմակայել ոսոխին: Նրանք նաև միատեսակ դիրքորոշում չունեցան արաբների հանդեպ: Նախարարների մի մասը, ինչպես տեսանք, պայմանագրեր կնքեց արաբ զորապետի հետ, մյուսները ըմբոստ վերաբերմունք ցուցաբերեցին, որից խիստ տուժեցին հատկապես Դվինի բնակիչները: Թեոդորոս Ռշտունին իր սակավաթիվ զորուժով դարանամուտ եղավ Կոդովիտում և հարձակվեց արաբների վրա, բայց ուժերն անհավասար էին, ուստի նա «ոչ կարաց զդէմ ունել նոցա. փախստական լինի առաջի նոցա»[36]: Այս փաստը վկայում է, որ Թեոդորոս Ռշտունին պայմանագիր չէր կնքել արաբների հետ և տակավին հակադիր դիրքավորում ուներ նվաճողների նկատմամբ:

Թեոդորոս Ռշտունու հակաարաբական գործելակերպն աննկատ չմնաց Բյուզանդիայում: Վերը նշված ընդհարումից անմիջապես հետո «ի կայսերէ հրաման հասեալ զաւրավարութեանն Թէոդորոսի Ռշտունեաց տեառն հանդերձ պատրկութեան պատուով»[37]: Կոստաս II կայսրը հույս ուներ հայ նախարարներին համախմբել ընդդեմ արաբների: Բայց այն փաստը, որ նախարարների մի մասն ընդունել էր արաբների դերիշխանությունը, ի դերև էր հանում այդ ուղղությամբ կայսեր ջանքերը: Մյուս

---

33 Տե՛ս Ղ. Ա լ ի շ ա ն. Այրարատ. Վենետիկ, 1890, էջ 495, ծան. 1: Ս տ. Մ ե լ ի ք - Բ ա խ շ յ ա ն. Հայաստանը VII-IX դարերում. Երևան, 1968, էջ 37, А. Т е р - Г е в о н д я н. Армения и Арабский халифат. Ереван, 1977, с. 24—25. Է. Դ ա ն ի ե լ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 160:

34 Ս ե բ ե ո ս, էջ 138:

35 Նույն տեղում, էջ 166:

36 Նույն տեղում, էջ 138-139:

37 Նույն տեղում, էջ 139:

նախարարներին իր կողմը գրավելու համար անհրաժեշտ էր բյուզանդական զորք մտցնել Հայաստան, քանի դեռ այնտեղ չէին հաստատվել արաբները: Կայսրը Պռոկոպոս զորապետի դլխավորությամբ զորք ուղարկեց Հայաստան: Թեոդորոս Ռշտունու զորակցությամբ այն պետք է պատերազմեր արաբների դեմ: Սկզբնապես հայ-բյուզանդական այդ դաշինքի շնորհիվ, ըստ Դիոնիսիոս Տել Մահրեցու, «Պռոկոպոսը և Թեոդորոսը ուժեղ հարձակմամբ հասան Բատնա-Սառուգ, ավերեցին ու կողոպտեցին այդ քաղաքը, վերցրեցին իրենց ցանկացածը և վերադարձան իրենց երկիրը»: Պատմադիրն այդ անցքը դնում է հունաց 955 (643/644) թվականին[38]: Իրականում այն տեղի է ունեցել մեկ տարի առաջ՝ 642/643 թվականին[39]: Սակայն ինչպես վկայված է Ղևոնդի երկում, Պռոկոպոսի և Թեոդորոս Ռշտունու դաշինքը քակտվեց: Դրան հետևեց Մարդուցայքում բյուզանդական 60 հազարանոց բանակի պարտությունը, որը տեղի ունեցավ «ի քսան և երկրորդ ամի Աբու Բաքրայ և Օթմանայ և Ամրի»[40], իմա՝ 642/643 թ.: Հետևաբար, Բատնա-Սառուգի վրա հայ-բյուզանդական զորուժի հարձակմանն ի պատասխան արաբները հարձակվել են բյուզանդական զորքի վրա՝ պարտության մատնելով նրան:

Ենթադրվում է, որ հայ նախարարների միավորիչ գործողությունները խոչընդոտվում էին Բյուզանդիայի կողմից[41]: Սակայն արաբական սպառնալիքները դամոկլյան սրի պես կախված էին կայսրության դլխին, ուստի վերջինս կարիք ուներ քրիստոնյա դաշնակիցների: Տվյալ պահին դինադաշինքի համար քաղաքական բարենպաստ պայմաններն առկա էին Հայաստանում, քանի որ նրան ևս սպառնում էին արաբները: Սասանյանների անկումից հետո Բյուզանդիան, ինչպես վերը նշվեց, ջանում էր իր ազդեցությանը ենթարկել նաև Հայաստանի մյուս բաժինը, որպեսզի այն չընկներ նոր և ահարկու ախոյանի դերիշխանության տակ, ինչը ճակատագրական կլիներ կայսրության համար: Բնականաբար, այդ նպատակի իրադործման երաշխիքն առաջին հերթին հայ նախարարների միասնությունը և կայսրության հետ համագաշն գործողություններն էին: Միայն այդ պարագայում նախարարներն ի զորու կլինեին պատկառազդու ուժ հանել ընդդեմ արաբների և ապահովել կայսրության անվտանգությունն Արևելքում: Հայ նախարարներին իր կողմը գրավելու նպատակով Բյուզանդիայի կայսրն առատորեն պատիվներ ու պաշտոններ էր շնորհում նրանց ջանալով օդտադործել հայերի ուժերը արաբների դեմ: Կայսրը Վարազտիրոց Բադրաաունուն ազատ արձակեց և բարձր պատիվների արժանացրեց, «մեծացոյց զնա քան զամենայն պատրիկսն, որ էին ի թագաւորութեան նորա»[42],– դրում է Սեբեոսը: Երբ կայսեր զորապետ Թուման

38 Denys de Tell Mahre, p. 6–7.

39 Հ. Մանանդյան. Երկեր, հ. Բ, էջ 528:

40 Ղևոնդ, էջ 8: Այս ընդհարումը դրվում է նաև Դվինի առաջին գրավումից 2-3 տարի առաջ (տե՛ս Հ. Համբարյան. Հայք արաբացվոց իշխանության տակ. ժամանակագրական խնդիրներ Սեբեոսեն.– «Հուշարձան», էջ 244), ինչն, իհարկե, չի հաստատվում սկզբնաղբյուրներով:

41 Տե՛ս Է. Դանիելյան. Հայաստանի քաղաքական պատմությունը, էջ 162:

42 Սեբեոս, էջ 132:

Ատրպատականի իշխանից[43] մեծ կաշառք ստանալով կալանեց Թեոդորոս Ռշտունուն և կապանքների մեջ դրած ուղարկեց Կ. Պոլիս, կայսրը ոչ միայն ազատ արձակեց Թեոդորոս Ռշտունուն, այլև պատիվներից զրկեց Թումային: Բնականաբար, կայսրը կկամենար Հայաստանը տեսնել ոչ թե Ատրպատականի իշխանի, այլ Բյուզանդիայի դերակայության տակ: Նա երկյուղում էր նաև, որ հայ նախարարները կարող են հակվել արաբների կողմը, ուստի երբ Վարազտիրոց Բագրատունին անսպասելիորեն հեռացավ Տայք նահանգ, Կոստաս II կայսրը Հայաստանում տեղակայված բյուզանդական զորքի հրամանատարին կարգադրեց «ունել զամենայն անցս ճանապարհացն», հավանաբար, արաբների հետ Վարազտիրոցի հնարավոր շփումը կանխարգելելու, նրան կայսեր կողմը հակելու միտումով: Նույն նպատակով բյուզանդական Թեոդորոս զորապետը նախարարների կամակցությամբ Ներսես Տայեցի կաթողիկոսին ուղարկեց Վարազտիրոցի մոտ, որպեսզի նրան հանձնի «երդումն հաւատարմութեան, ի խնդրել նմա զիշխանութիւն աշխարհին»[44]: Տայքը կաթողիկոսի հայրենիքն էր: Վարազտիրոցը թերևս դիմեց այնտեղ՝ Ներսես Շինողի հետ կայսրության հանդեպ քաղաքական կանխորոշ ծրագիր մշակելու միտումով: Հարկավ, կաթողիկոսը մեկնեց Տայք և Վարազտիրոցին հանձնեց երդմնագիրը: Սեբեոսը, որ հայտնի է իր քաղկեդոնամերժ մտայնությամբ և Ներսես Տայեցու բյուզանդամետ դիրքորոշման հանդեպ բացասական վերաբերմունքով[45], գրում է, որ նշված երդմնաթղթում Վարազտիրոցը հավաստում էր, որ նվիրվածությամբ ծառայելու է կայսրին: Պատմագիրը Վարազտիրոցի շուրթերին է դնում հետևյալ խոսքերը՝ ուղղված Կոստաս II-ին. «Ոչ ուրեք երթամ ի ծառայութենէդ ձերմէ ... կեամ և մեռանիմ ի վերայ ձերոյ աստուածապաշտութեանդ»[46]: Ինչպես տեսնում ենք, շահարկվում է նաև կրոնական գործոնը, որը տվյալ պահին զորեղ կռվան կարող էր դառնալ հայ-բյուզանդական հարաբերություններին դրական լիցք հաղորդելու համար: Կայսեր նկատմամբ հավատարմության ազդու երաշխիքներ պարունակող այդ երդմնագիրը սլետք է բացառեր Վարազտիրոցի և արաբների մերձեցման հնարավորությունը:

Արաբներն իրենց հետ պայմանագրեր կնքած այլակրոն իշխաններին ընձեռում էին որոշակի իրավունքներ, անձի և ունեցվածքի, կրոնի անձեռնմխելիություն[47], որով, ինչպես տեսանք, օժտվեցին նաև որոշ հայ նախարարներ: Այս մասին տեղյակ լինելով, Կոստաս կայսրը հարկ է, որ

---

43 Ատրպատականի լեռնային շրջաններում իր անկախությունը տակավին պահպանած Մարաց իշխանը հավանաբար ջանում էր հանդես գալ իբրև Սասանյանների իրավահաջորդ և, բնականաբար, հավակնում էր նաև երբեմնի պարսկական Հայաստանի նախարարների հանդեպ տերունական իրավազորության, ինչին դիմադարձում էին հայ իշխանները: Սեբեոսը վկայում է, որ դեռևս Վարազտիրոց Բագրատունին «ոչ նուաճեալ հնազանդեցաւ իշխանին մեծի որ յԱտրպատական աշխարհին, որում խոռոիս Որմիզդն կոչէին» (տե՛ս Ս ե բ ե ո ս, էջ 132): Ատրպատականի տերը, ինչպես կարելի է կռահել Սեբեոսի վկայությունից, կամենում էր Թումա զորապետի օգնությամբ իր կամքը պարտադրել նաև Թեոդորոս Ռշտունուն:

44 Ս ե բ ե ո ս, էջ 144:

45 R. T h o m s o n. The defence of Armenian Ortodoxy in Sebeos (“ΑεtoΣ”, Stuttgard und Leipzig, 1998, p. 329).

46 Ս ե բ ե ո ս, էջ 144:

47 A b o u J o u s u o f, p. 193; B a l a d h u r i, I, p. 270–271, 275–276.

ջանար հայ նախարարներին վերապահել (կարելիության շրջանակներում) մեծ արտոնություններ, որպեսզի ի դերև հանվեր արաբ զորապետների ընձեռած առանձնաշնորհումների ազդեցությունը նրանց վրա: Վերը նշված երդմնագրից երևում է, որ դա պատճառ էր լինելու, որպեսզի կայսրը Վարազտիրոցին նշանակեր Հայոց իշխան: Հայ նախարարների բյուզանդամետ դիրքորոշմանը նպաստում էր, անշուշտ, տվյալ պահին կայսրության զորքը Հայաստանում պահպանելու հանգամանքը: Կոստաս II-ը գլացավ 646 թ. անսպասելիորեն վախճանված Վարազտիրոցի որդուն՝ Սմբատ Բագրատունուն, շնորհել հոր (Հայոց իշխանի) պաշտոնը: Սեբեոսը գրում է, որ կայսրը Սմբատին կարգեց «ի պատիւ հաւր իւրոյ. տուեալ նմա զիշխանութիւնն ընիկ տանուտէրութեանն ասպետութեան»[48]:

Սեբեոսի հազորդած տեղեկությունների լույսի տակ հնարավոր է դառնում պարզել տվյալ ժամանակամիջոցում Հայաստանում ծավալված իրադարձությունների հաջորդականությունը: Պատմագրի վկայությամբ Կոստաս II-ի դահակալման առաջին տարում (641 թ.) նրա զորապետ Թեոդորոսն ուղարկվեց Հայաստան և այնտեղ մնաց կարճատև ժամանակ: Այս զորապետի օրոք Վարազտիրոցի որդի Սմբատը նորընծա կայսեր կողմից արժանացավ սպաթարի ու կանդիդատի պատվաստիճանների: Այս՝ մասին Սեբեոսի վկայությանը հետևում է նրա հետևյալ հաղորդումը. կայսրը Սմբատին «անդէն կարգեաց ի կարդն առաջի յամին հինգերորդի թագաւորութեան իւրոյ»[49], իմա՝ 646 թ.: Այս վկայություններից երևում է, որ կայսրը երկիցս (մեկը՝ 641, մյուսը՝ 646 թթ.) պատիվներ է շնորհել Սմբատ Բագրատունուն: Պատմագրի «ի կարգն առաջի» արտահայտությունը համանշանակ է տոհմապետի (տանուտերության) պաշտոնին, որն, ինչպես տեսանք, հոր մահվանից հետո կայսեր կամքով վերապահվեց Սմբատին:

Ի՞նչը կայսրին դրդեց երկրորդ անգամ պատիվներ շնորհել Սմբատ Բագրատունուն: Նրա այդ քայլն ուներ, անշուշտ, ազդու դրդապատճառներ: Սմբատին Հայոց իշխանի պաշտոն չշնորհվեց, քանի որ վերջինիս համար կար ավելի կարողունակ և հեղինակավոր թեկնածու՝ Թեոդորոս Ռշտունին, որը նախկինում (մինչև արաբական արշավանքները) վարել էր այդ պաշտոնը և այժմ դիմադիր դիրքորոշում ուներ արաբների հանդեպ, ուստի նա կայսեր կամքով «կարգեցաւ ի նոյն իշխանութեան», գրում է Սեբեոսը[50]: Անշուշտ, Սմբատ Բագրատունին կարող էր իրեն համարել հոր բնական հաջորդը նաև Հայոց իշխանի պաշտոնում: Հավանորեն այս հանդամանքը նկատի առնելով, կայսրը երկրորդ անգամ (երբ Թեոդորոս Ռշտունուն կարգեց Հայոց իշխան) Սմբատին օժտեց պատվատիտղոսնե-

---

48 Սեբեոս, էջ 144: Գ. Աբգարյանի կարծիքով Սեբեոսի նշած «տանուտէրութեան» արտահայտությունը «հատուկ պաշտոնի անուն է», որից երևում է, որ պատմիչի ապրած ժամանակ եղել է Հայոց այրուձիու «ընդհանուր հրամանատարի պաշտոն» (տե՛ս Սեբեոս, էջ 312, ծան. 507): Սակայն պատմագիրն այստեղ նկատի ունի Բագրատունյաց տոհմի տանուտերության իրավունքը (Հ. Մանանդյան. երկեր, հ. Բ, էջ 541):

49 Սեբեոս, էջ 143:

50 Սեբեոս, էջ 145: Այս արտահայտության տակ մատենագիրն ի նկատի ունի Թեոդորոս Ռշտունու կողմից նախկինում վարած Հայոց իշխանի պաշտոնը: Այլ առիթով Սեբեոսը գրում է, որ մինչև այս գեպքերը Թեոդորոս Ռշտունին «էր իշխան աշխարհիս Հայոց» (նույն տեղում, էջ 142):

րով: Դա, ինչպես տեսանք, տեղի ունեցավ 646 թ.: Կայսրը նպատակ ուներ Սմբատին պահել մայրաքաղաքում[51], թերևս Թեոդորոս Ռշտունու հետ նրա գժտվելը կանխելու նպատակով:

Սեբեոսի հետագա շարադրանքից երևում է, որ հաջորդ տարի, ի-մա՝ 647 թ., արաբները վերստին արշավեցին Հայաստան, այս անգամ Ատրպատական ներխուժելուց հետո, ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ նրանք ունեին նաև «մարաց իշխանի» անկախությունը վերացնելու նպատակ: Արաբական զորքը, բաժանվելով երեք զորախմբերի, արշավեց հետևյալ ուղղություններով.

ա) դեպի Այրարատ,

բ) Սեպհական դնդի կողմերը (Վասպուրական),

գ) դեպի Աղվանք[52]:

Համաձայն Ղևոնդի հաղորդման, արարները «հասին ի սահմանս Հայոց՝ յերիս բաժանեալ առաջս՝ սփոեցան յասպատակս իւրեանց: Առաջ մի հատեալ ընդ կողմն Վասպուրական աշխարհին՝ առին զաւանս և զամրոցս որ մինչև ի Նախջաւան քաղաք և առաջ մի ընդ կողմն Տարօնոյ: Եւ միւս առաջն հասեալ ի Կոգովիտ՝ պաշարէին զամրոցն Արծափայ»[53]:

Այսպիսով, ըստ Ղևոնդի, Հայաստան թափանցած արաբական զորքը շարժվել է երեք ուղղությամբ՝

ա) դեպի Վասպուրական,

բ) դեպի Տարոն,

գ) դեպի Կոգովիտ (Այրարատ):

Ինչպես տեսնում ենք, Ղևոնդը չի հիշում Աղվանքի կողմերը շարժվող զորախումբը և խոսում է միայն Հայաստանում ծավալված դեպքերի մասին: Անշուշտ, տվյալ դեպքում Սեբեոսի ուշադրությունը նույնպես առաջին հերթին պետք է գրավեին Հայաստանում ընթացող իրադարձությունները: Ուստի Սեբեոսի մոտ նշված երրորդ նպատակակետը՝ պետք է լինի ոչ թե Աղվանքը, այլ Տարոնը: Դրա համար հիմնավոր կռվան կարող է ծառայել պատմագրի մեկ այլ հաղորդումը, որի համաձայն «այն զաւրն, որ ի կողմանս Այրարատեան, եհար սրով մինչև ի կողմանս Տայոց, Վրաց և Աղուանից»[54]: Այս վկայությունից երևում է, որ դեպի Աղվանք է արշավել արաբական առաջին՝ Այրարատ ներխուժած զորախումբը: Ն. Ակինյանը Սեբեոսի «առաջի մի յԱղուանս» ընթերցվածը սրբագրում է «յառաջ մի ի Նախջաւան, ձևով»[55]: Սակայն թե՛ Սեբեոսի և թե՛ Ղևոնդի հաղորդումները հիմք չեն տալիս նման սրբագրման համար: Վերևում նշվեց, որ ըստ Ղևոնդի տեղեկության, Վասպուրական խուժած զորքը հասել է մինչև Նախճավան: Իսկ Սեբեոսի մոտ կարդում ենք. «Այն զաւրն, որ ի կողմանս Այրարատեան, եհար սրով մինչև ի կողմանս Տայոց, Վրաց և Աղուանից, առ զաւար և զդերութիւն և եկն էանց ի Նախճաւան առ այն

---

51 *Հետագայում Կոստաս II-ը Սմբատին նշանակեց «իշխան զաւրու Թրակացւոց իշխանացն» (Ս ե բ ե ո ս, էջ 163):*

52 *Ս ե բ ե ո ս, էջ 145:*

53 *Ղ և ո ն դ, էջ 11:*

54 *Ս ե բ ե ո ս, էջ 146:*

55 *Տե՛ս «Հանդէս ամսօրյա», 1969, էջ 350:*

զաւր, որ մարտ եղեալ կռուէին ընդ բերդին Նախճաւանի»[56]: Այս հաղորդումից երևում է, որ մինչև Աղվանք շարժվող արաբական զորքի Նախճավան հասնելը, վերջինս արդեն պաշարված էր արաբական մեկ այլ զորաբաժնի կողմից, որը, ինչպես տեսանք, Վասպուրական ներխուժած զորախմբի միավորումներից մեկն էր: Խումբը շարժվեց նաև Երևանի վրա, որը հեռու չէր Նախճավանից: Վասպուրական թափանցած զորքը հարկ է, որ գրավեր նրա կենտրոններից մեկը համարվող Նախճավանը, որը Բելազուրին համարում է «Վասպուրական նահանգի մայրաքաղաք»[57]:

Սեբեոսի վկայությամբ Սեպհական գնդի (Վասպուրականի) կողմերն արշավող զորքը «հարեալ զամենայն կողմանսն զայնոսիկ սրով սուսերի, առին զաւար և զգերութիւն: Եւ եկին ժողովեցան ի Հէրևան և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ»[58]:

Պատմագրի այս հաղորդումը տեղիք է տվել տարամերժ ենթադրությունների[59]: Անշուշտ, հավանական կարելի է համարել Հովհաննես Դրասխանակերտցու մի վկայությունը, որտեղ ասվում է. «Յայնմ ժամանակի ասեն լինել զկռիւն որ ի քաղաքագիւղն Երեվանի, զոր և բաւական քեզ ուսուցանեն զայնր պատերազմի զհանգամանս, որ նախ քան զմեզ զնա պատմագրեցին»[60]: Ինչպես տեսնում ենք, պատմագիրը վկայում է, որ խնդրահարույց եղելության մասին իրենից առաջ գրել են ուրիշ պատմագիրներ, որոնց մեջ, անշուշտ, նա նկատի ունի առաջին հերթին Սեբեոսին: Սամվել Անեցին 660 թվականի տակ հիշում է. «Երեվանու կռիւն, յորում զզիարդն դտցես՝ առ պատմագրութիւնս առաջնոցն. Շապուհ և Ասողնիկ յիշեն»[61]: Մեջբերված այս վկայությունը եթե համարվի ընդունելի ու արժանահավատ, ապա կարելի է ենթադրել, որ բացի Սեբեոսի մոտ վկայվածից, արաբները Երևանի դեմ կռիվներ են մղել նաև հետագայում[62], ջանալով ջնջել իրենց պարտության հետքերը:

---

56 Սեբեոս, էջ 146:

57 Baladhuri, I, p. 307.

58 Սեբեոս, էջ 145:

59 Դեռևս Հ. Շահխաթունյանը «Հէրևան»-ը տեղորոշում էր Կոգովիտում (տե՛ս Հ. Շահխաթունեան. Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ. հ. Բ, Էջմիածին, 1842, էջ 134: Թ. Ավդալբեգյանը «Հէրևանը» տեղադրում է Վասպուրականի Առեստ ավանում (տե՛ս նրա. Հայագիտական հետազոտություններ. Երևան, 1969, էջ 146–147): Հ. Մանանդյանը «Հէրևանը» համարում է «Հերաւան» տեղանվան աղճատված ձևը (Հ. Մանանդյան. Երկեր. հ. Ե, Երևան, 1984, էջ 173): Գ. Աբգարյանն առաջարկում է «Հէրևան»-ն ընթերցել «Հեր և անդ» ձևով (Գ. Աբգարյան. «Երևանի» բերդի հնագույն հիշատակությունը.– «Լրաբեր հաս. գիտ.», 1972, №8, էջ 30): Է. Դանիելյանը «Հէրևան»-ը նույնացնում է Հարք գավառի Հերեան գյուղի հետ (տե՛ս Է. Դանիելյան. 647 թ. արաբական արշավանքը Հայաստան.– ՊԲՀ, 1982, №2, էջ 114: Նույն ի՝ Հայաստանի քաղաքական պատմությունը..., էջ 176): Սակայն որևէ տեղ չի նշված, որ այս գյուղն ունեցել է բերդ, մինչդեռ ըստ Սեբեոսի «Հէրևան»-ը ուներ ամրակուռ բերդ, որը արաբները չկարողացան գրավել:

60 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 92:

61 Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց. աշխ. Ա. Տէր-Միքելեանի. Վաղարշապատ, 1893, էջ 83:

62 Ղ. Ալիշանը կարծում է, որ Երևանի դեմ արաբների երկրորդ հարձակումը տեղի է ունեցել 658 թ. (Ղ. Ալիշան. Այրարատ, էջ 299-300): Թ. Հակոբյանն այն գնում է 660 կամ 658 թվականին (տե՛ս Թ. Խ. Հակոբյան. Երևանի պատմությունը. Երևան, 1969, էջ 198):

Երևանի տակ արաբների կրած պարտությունն ինքնին ապացույց է նրանց զորքի սակավաթվության: Երևանը, որքան էլ այն ամրանիստ լիներ, չէր կարող դիմանալ արաբական միացյալ զորուժի գրոհներին: Պետք է կարծել, որ Երևանի տակ 647 թ. կռիվներ է մղել Վասպուրական մտած արաբական զորախմբի միավորումներից մեկը: Արաբների հետագա գործողությունները ցույց են տալիս, որ նրանք իրենց ուժերը բաշխել են մի քանի ուղղությունների վրա երկրին արագ տիրանալու միտումով: Բացի այդ, կենտրոնացված դիմադրության բացակայությունը նրանց հնարավորություն էր ընձեռում փոքր զորասյուներով հասնել հաջողության: Դա նաև հաղթանակի որոշ հնարավորություն էր տալիս հայերին: Սեբեոսի ուշագրավ մի վկայության համաձայն «Հէրևան»-ի տակ անհաջողություն կրելուց հետո արարները «եկին ի Որդսպու և ոչ նմա ինչ կարացին առնել»: Պատմիչը չի նշում, թե արաբները որտեղից են շարժվել Որդսպու: Մինչդեռ Արծափի գրավման մասին պատմելիս նա հիշում է, որ այն իրականացրել են Որդսպուի դեմ մարտնչած զորականները, որոնք «գնացին անտի (Որդսպուից – Վ. Վ.) ե բանակեցան յԱրծափս»[63]: Որդսպուն չի հիշվում ուրիշ մատենագիրների կողմից, ուստի դժվարանում է նրա տեղորոշումը[64]: Սեբեոսի վկայությունը թույլ է տալիս ենթադրել, որ այն Արծափից հեռու չպետք է դտնվեր, ուստի արաբներն ուրիշ զորամաս չնետեցին Արծափի դեմ: Պատմագիրը նշում է, որ Արծափի վրա հարձակված արաբական զորքի թիվը մոտ երեք հազար էր: Նրան պարտության մատնեց Թեոդորոս Ռշտունին ազատելով հայ գերիներին[65]: Այս հաղթանակի շնորհիվ արաբները երկու տարի դադարեցին իրենց ասպատակությունները Հայաստանում[66]:

ПОЗИЦИЯ, ЗАНЯТАЯ АРМЯНСКИМИ НАХАРАРАМИ В ПЕРИОД ПЕРВЫХ АРАБСКИХ НАШЕСТВИЙ

ВРЕЖ ВАРДАНЯН

Резюме

В 640-е годы в период арабских нашествий в Армению и приграничные области Византии появились определенные условия для военно-политического союза между Византией и Арменией, чему способствовала политика императора Геракла (610-641). Его преемники придерживались того же политического курса в отношении правителей Армении – Варазтироца Багратуни, Давида Сааруни и Теодороса Рштуни. Арабы вначале вторглись в Четвертую Армению, они завладели также персидской частью Армении. Военачальником Персид-

63 *Սեբեոս, էջ 145:*

64 *Հ. Մանանդյանն այն տեղադրում է Բերկրիի ձորից, ապա Խոյից Կոգովիտ ձգվող ճանապարհների միացման վայրում (գավառի հարավկողմում), այժմյան Տապարիզ գյուղի մոտ (տե՛ս Հ. Մանանդյան. Երկեր. հ. Ե, էջ 174):*

65 *Սեբեոս, էջ 146:*

66 *Ղևոնդ, էջ 12:*

ской Армении был Теодорос Рштуни, который имел персидскую ориентацию и боролся против арабских полчищ, тогда как некоторые нахарары заключали договоры с арабскими военачальниками. Арабы овладели городом Двином дважды: в 641 и в начале 650-х годов. Армянские нахарары, сохранившие внутренний суверенитет, проявляли сепаратные тенденции и не могли объединить свои усилия против завоевателей. Сообщение Себеоса о нашествии арабов (в 647 г.) в Албанию следует корректировать, ибо имеются данные того же историка, что Албанией завладела рать, вторгнувшаяся в Айрарат. Упоминаемая у Себеоса крепость "hЭреван" идентична с Ереваном.